



Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлиς. Редакция «Мшак».
կամ. Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խրաքանչիւր բառին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“

ԴՐԱՎԱՆԵԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԴՐ

ՆԵՐԿԱՅ 1886 ԹԻՒՆ

Հրատարակվում է Թիֆլիսում, շաբաթը երեք անգամ, նոյն դիրքով և նոյն պրոգրամայով: Մենք
ստանում ենք տեղական Հեռագրի 6 ռուբլի:

«ՄՇԱԿ» տարեկան գինը 10 ռուբլ է, վեց ամսականը 6 ռուբլի:
Գրվել «ՄՇԱԿ» կարելի է ԽՊԱՎԳՐԱՏԱՆԸ: ԽՊԱՎԳՐԱՏԱՆԸ գտնվում է Բարձրակի և
Բաղրինի փողոցների անկյունում, Թաւմաշէի տանը, № 12 բնակարանում: Ուղղակի մուտքը Բա-
ղրինի փողոցից է, ինչպէս նաեւ Ուլարովի փողոցից:

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆՑ «Մշակ» գրվելով կարելի է վճարել 25 ֆրանկանոց թղթադրամով:
Թիֆլիսում «ՄՇԱԿ» համարները հատով ծախվում են 7 կոպեկով: ԵՍԱՎԵՐԳՈՎԻ պավի-
լիոնում, պ. ՏԵՐ-ՅՈՎԱՆՔԻԱՆԻ ծխախոտի մագաղանում (կովկաս հիւրանոցի տանիք) և պ. ԱԼԻՍՆ-
ՆՈՎԻ ծխախոտի մագաղանում (Վ. Բորոնցովի արձանի դիմաց):

Յայտարարութիւնները, ամեն լեզուներով, ընդունվում են ԽՊԱՎԳՐԱՏԱՆԸ: Յայտարարութիւն-
ների իւրաքանչիւր բառին վճարվում է 2 կոպեկ:
ԽՊԱՎԳՐԱՏԱՆԸ, բաց է ամեն օր, առաւօտեան 10 ժամից մինչև 2 ժամ կէսօրից յետոյ,
բացի կիրակի օրերից:

Կայանութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար պէտք է դիմել Նեոնեալ հաս-
ցեով. ТИФЛИСЬ, Редакция газеты «Мшак», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Հասցեն փոխելու ժամանակ պէտք է ուղարկել խմբագրութեանը 28 կոպեկ, կամ 4 հատ 7 կո-
պեկանոց փոստային մարկա:

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Իրաւունք չունէք. — ՆԵՐԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նամակ Ղուբայից. Ներքին լուրեր. — ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆՑ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բերքերի կոնդալից յետոյ. Արտա-
քին լուրեր. — ԽՈՒՆԻՆԻ. — ՀԵՌԱԳՐԱՆԻՆԻ. — ԲԱ-
ՊԱՏԱՍԻՆԻՆԻ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ. Մեր ընտանեկան կեանքը.

ԻՐԱՌՈՒՆԻՔ ՉՈՒՆԵՔ

«Մշակ» անցելով 73-րդ համարում
մենք տպեցինք բանասիրականի բաժնում:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԵՐ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԿԵԱՆՔԸ

Եթէ ամեն բանի վրա խօսվում է մեր մամուլի
մէջ, ամեն բանի վրա գրվում է, վիճվում է, քնն-
նադատութեան է առնվում ամեն մի առարկայ և,
ի հարկէ, այդ բոլորը հասարակութեան օգտի հա-
մար, ուրեմն և թող ներքին մեզ մեր թող գրել
օգնութեամբ, փոքր ինչ խօսել այն բանի վրա,
որը մեզանց աւելի մօտիկ է, որը մեզ աւելի
հարկաւոր է, որը մեր գոյութիւնն է ներկայաց-
նում,—այն բանի վրա, որի մէջն ենք մենք և որը
մեր մէջ է, որը մեր արմատը և հիմքն է կաղ-
մում, որի մէջ մենք ապրում ենք և աճում,—այդ
մեր ընտանեկան կեանքն է: Իսկ թէ ինչ տեսակ
սխառեմա, ինչպիսի ուղղութիւն, կարգ ու կանոն
կայ այդ կեանքի մէջ, հենց դրա վրա մենք մեր
կարողութեան չափ կամենում ենք քննել խօսել:
Մեր կարծիքով սա մի այնպիսի կարևոր հարց
է, որ անհրաժեշտ է չօչափել սրան, անհրա-
ժեշտ է պատկերացնել նրա վնասակար ուղղու-
թիւնը, անհրաժեշտ է սրա քաղաքագիր, թէ ինչպիսի
աւերիչ և սխալ սկզբունքների վրա է հիմնված
մեր ընտանեկան կեանքը ընթացքը, ինչքան վնա-
սակար, վտանգաւոր և խեղդված են նրա աւան-
դական ուղղութիւնը, նրա նահապետական սիւ-
տեման և կանոնները, ինչքան դառն և մահացու-
ցիչ են նրա գոյութեան խմորները, և շատ ուրախ
կը լինէինք, եթէ մի ուրիշն էլ աւելի խելացի
կերպով, աւելի ուժեղ գրով մեր մամուլի մէջ
խօսէր այդ մեղ ամենից հարկաւոր և մեր կեանքը
ներկայացնող խնդրի վրա:

Յայտնի է, որ ոչ մի ազգութեան մէջ այնքան
բազմաթիւ անձինքներ չեն բաղկանում ընտանի-
քը (օջախը), ինչքան մեր հայերիս մէջ: Մեր մէջ

«Ս. Պետերբուրգի կեանքը» վերնագրով յօդուածը:

Այդ յօդուածը կրկնում է, միայն բանա-
սիրականի ձևով, այն գանգաւորները, որ
մենք արդէն վաղուց սովոր ենք լսել մեր
պարբերական մամուլի մէջ.... Միշտ գան-
գաւորներ մեր ինտելիգենցիայի կողմից մեր
հարստահարող, հարստացած վաշխառու,
վաճառական, անսիրտ դասակարգի, բուր-
ժուազիայի դէմ:

Բայց հարցը դրանումն է՝ արդեօք մեր
ինտելիգենցիային պատկանողները իրաւունք

ընտանիքը բաղկանում է քչից սկսած մինչև 10
—15—20 հոգուց, իսկ գիւղերում մեր աչքով
տեսել ենք այնպիսի օջախներ, որոնք կազմված
են 15—25—35 և աւելի հոգուց, ուր մեծ յան-
ցանք է համարվում, եթէ մէկը աւանդ է իր կի-
նը և գաւախները և ջոկվելով իր համար, մի ա-
ռանձին օջախ կազմում: Անուրանալի է, որ մի
նոյնը լինում է և քաղաքներում, և կարծես հա-
յերի մէջ մի տեսակ աւանդութիւն է, որ ընտա-
նիքի մէջ ինչքան բազմաան, բոլորն էլ ապրել
միասին, մէկ տեղ խեղդված, բոլորն էլ մի օջախ
կազմեն: Բայց արդեօք երջանիկ է մի այսպիսի
բազմութիւնից կազմված օջախը. նրանք խաղաղ,
սիրով և հաւասար քայլում են այդ օջախի
լուծը: —Ո՛հ: Թէ քաղաքներում և թէ գիւղե-
րում, այսպիսի բազմութիւնից կազմված ընտա-
նիքներում միշտ անպակաս է անհամաձայնութիւ-
նը, աղմուկը, կռիւը, հայդայիքը, յիշողները,
միմեանց ջարդը և շատ անգամ էլ արեւնը: Այս,
այդ բոլորը մենք հենց աչքով տեսել ենք և տես-
նում էլ ենք: Այդպիսի բազմութիւնից կազմված
օջախներում ոչ աշխատանքն է երևում, ոչ էլ աշ-
խատողը: Ամեն բան անում են միմեանց հակա-
ռակ, ամենքն էլ միմեանց խոտոռանալ, միմեանց
ընդդէմ, միմեանց թշնամի, դրանք այն աստիճան
իրար առում են, որ մինչև անգամ մէկի ոչ թէ
խօսածը կամ ասածը, այլ շարժումներն էլ
միմեանց դուր չէ գալիս: Մէկի լաւ չինածը մի-
սին «վատ» է երևում, մէկի «չան» ասած բառը
միմեանց «լաւ» է թւում:

Մի այսպիսի բազմութիւնից կազմված օջախի
մէջ գտնվում են և ժիր աշխատաւորներ, և ծոյ-
լեր, և խելօքներ, և խորամանկներ, և հարեցող-
ներ, և վատ պարզ ու բարձր տէրեր, և յիմար-
ներ: Խեղճը մի բան է առաջարկում, յիմարները
ընդդիմանում են, աշխատաւորը ծոյլերին տեսնե-
լով՝ նրա ջղերն էլ թուլանում են և այլ ևս արա-
մաղիւր չէ լինում աշխատելու, իսկ ինչ էլ որ աշ-
խատում է՝ խորամանկը նրան յարկաւորում է,

ունեն գանգաւորներ մեր հասարակութեան
հարստահարող, վաճառական, կապաւառու,
վաշխառու դասակարգի դէմ:

Մի հայ ուսանող կարօտութեան մէջ է,
հիւանդ է, քաղցած է, նա դիմում է մի
հայ հաստափորին և օգնութիւն է խնդ-
րում նրանից, բայց այդ հայ անսիրտ հաս-
տափորը չէ օգնում հայ ուսանողին.... Ա՛խ,
որքան անսիրտ, ետական, անաստուած, ան-
պիտան է հայ բուրժուան, բացականչում
է զայրացած, ազնիւ բարկութեամբ լցված
հայ ինտելիգենտը....

Ջարմանալի պահանջ. հայ հաստափորը
պէտք է քննել, զգայուն սիրտ ունենայ
դէպի հայ աղքատ ուսանողը, պէտք է ան-
պատճառ նրան նիւթապէս օգնի, երբ նոյն
ինքն հայ ինտելիգենտը, կամ ինտելիգենտ
եղածը աւելի էլ անազնիւ է վարվում հայ
ուսանողի հետ, երբեք չէ օգնում նրան,
անտես է անում հայ ուսանողութեան
գոյութիւնն անգամ, այն ուսանողութեան,
որի անգամը նա ինքն է եղել մի ժամա-
նակ, որի նիւթական հաւաքական օժան-
դակութիւնից նա տարիներով օգտվել է
մինչև անգամ:

Ծիծաղելի վրդովմունք, ծիծաղելի զայ-
րոյթ: Վրդովելի զայրանալ որ հայ վաշ-
խառուն անսիրտ է դէպի աղքատ ուսանող-
ը: Նա, այդ հարստացած վաշխառուն, հօ-
բերէր ուսանող չէ եղել, իրենցից չէ ե-
ղել, կամ իրենցից իրան երբեք չէ ձեռ-
ցել, մեծ մեծ խօսքեր, ճոճաւն ֆրազներ
չէ արտասանել: Նա միշտ եղել է գործնա-
կան, ետական, հարստահարող նա ցոյց է
տուել իրան այն, ինչ որ է, նա երբեք չէ
ձեռքըր իրան այն, ինչ որ է: Նա սկսել է
իր կեանքի ասպարէզը նրանով, որ եղել է
գիշուր գործակատար ուրիշի մօտ, գողա-
ցել է իր տիրջից, կողոպտել, խաբել է իր
տիրջը, աշխատել է նրան քանդել, աշխա-
տել է ամենքին խաբել, կեղծել է թղթա-

խաղում, միշտ փառած ապրանք է ծախել,
միշտ սուտ երգել է, հենց որ դիպել է մի
քանի ռուբլի, սկսել է վաշխառութեամբ
պարսպել, որտեղ ձեռքը հասել է ամեն
տեղ կողոպտել, խաբել, հարստահարել է:
Սկսել է իր կեանքի ասպարէզը գողութեամբ,
շարունակել է նրան վաշխառութեամբ և
հարստահարութեամբ և վերջացրել է ետա-
կան, անսիրտ հանգիստ աղայութեամբ:
Եւ դուք այնքան միամիտ էք, կամ միամիտ
էք ձեզ ձեռքնուով, որ վրդովում էք, զայ-
րանում էք, որ այդ տեսակ մարդ զուրկ է
աշխատեան նուրը զղացմունքներից, մար-
դասիրական իդէալներից, որ նա քննել
զղացմունքներ չունի դէպի ուսանող երիտա-
սարգութիւնը ու իր զիպած կարողութիւնը
անսխալապէս չէ բաժանում ուսանողութեան
մէջ, ուսանողութեան առջև իր գրգռու-
նեքը մեծահոգութեամբ չէ դառնալում....

Հարստահարող այն է ինչ որ է իր
ամբողջ կեանքի ընթացքում նա երբեք ի-
դէպիստ չէ եղել, ուսանող չէ եղել իր
գիշատից ինտելիկաները երբեք չէ ծածկել
ոչ դրի առջև, իր երեսի վրա երբեք դը-
րած չէ ունեցել աշխատեան, իրենցից աշ-
խատեան կեղծ դիմակը.... Ի՛նչ էք պա-
հանջում նրանից, ուրեմն: Կուք պահան-
ջում էք նրանից այն զղացմունքները, որ
չունեն նոյն իսկ ձեռ ընկերները, նախկին
իրենցիկաները:

Ի՛նչի համար այդ միամիտ բարկու-
թիւն, այդ չինծու վրդովմունք, այդ ան-
տեղի զորանք, այդ կեղծ զայրոյթ մի շատ
բնական և սովորական երեւոյթի պատճա-
ռով: Հարստահարողը, նախկին գողը, նախ-
կին վաշխառուն, այժմեան աղան,—անտար-
բել է դէպի ուսանող երիտասարդութեան
կարիքները, անսիրտ է դէպի ուսանողու-
թիւնը: Բայց դա շատ բնական երեւոյթ է
և դրանից զայրանալու ոչինչ պատճառ, ոչ
չինչ իրաւունք չը կայ:

առանձնացնելու, ասում են.—էհ, որդիք, ամօթ
է, իմացողներ մեզ մի մատ մեղր կը չինեն,—
ինչ արած, օջախի մէջ կռիւ էլ կը պատահի, մի-
մեանց կը ծեծեն էլ, միմեանց սրով կը զարկեն
էլ, միմեանց հետ կը կռուեն էլ, սակայն չեն բա-
ժանվել, որովհետեւ թէ ամօթ է և թէ մեղք, և
այն ժամանակ էլ մի փոքր երկու կը դառնայ,
փոխանակ մէկ տեղ հրազ վառելու, երկու տեղ
կը վառվի, փոխանակ մի տան քրէհ տալու, մի
քանի տան քրէհ կը տաք, փոխանակ մէկ տեղ
կերակուր երկու, մի քանի տեղ կերակուր և
այլն: Այդպիսով ձեռ աշխատանքին, ձեռ գրպա-
նին կը վնասէ և, բացի դրանից, լսողները մեզ
կը ծաղրեն, իսկ դուշմանները կուրախանան ինչ
արած, այսօր միմեանց «չօռ» կասէք, իսկ էգուց
—«չան»: Որդիք, գոնէ մինչև մենք կենդանի
ենք միասին մնացէք, իսկ երբ որ մեր երեսի
նամուտը կը մեռնէ, այն ժամանակ դուք
գիտէք....: Խեղճերը ճարահատաւ, դարձեալ
մնում են առաջուայ դրութեան մէջ, միմե-
անց հարստահարելով, միմեանց միմե-
անց միմեանց հաղթ հաղթ անելով, միմեանցից
զոհողանալով, մինչև որ օջախի մէջ չէ պատա-
հում մի ծայրահեղ դէպք, այն է, որ մէկը միւսի
աշխատանքը թագցնում է և, բացի դրանից, եղ-
բայրների առաջ դնում անազնի պարբեր և այլն:
Միայն այդ ժամանակ դրանք աւանայ բաժան-
վում են միմեանցից, երբ որ արդէն դանակը ու-
կորներին է հասնում.... Եւ բաժանվում են ինչ-
պէս.... Հազիւ անցնում է մի քանի ամիս և
տեսնում էք, որ այդ բաժանված եղբայրներից
մէկը, իր եղբայրներից գողացած փողերով, անազնի
հարստութեան տէր է, միւսը գրկված, աղքատա-
ցած և օրուայ հացի կարօտ, իսկ երրորդը՝ տես-
նելով, որ իր եղբայրներից կողոպտված գրկված է,
իրան նուիրում է հարեցողութեան.... Այդ եղ-
բայրները, միմեանցից բաժանված օրուանից, սկը-
սում են միմեանց դատարաններում քաշքշել, հա-
լածել, մինչև որ ամենքն էլ չեն աղքատանում

